ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում հավատավոր Մեր ժողովրդին ի Հայրենիս եւ ի Սփյուռս եւ շնորհավորում Հանրապետության տոնի առիթով:

1918 թվականի մայիսյան փառապանծ հերոսամարտերով մեր ժողովուրդը՝ համախումբ ու միասնական, պաշտպանեց Հայրենի երկիրը եւ բարդ ու դժվարին իրավիճակում հաստատեց Հայաստանի առաջին Հանրապետությունը:

Կարճատեւ գոյություն ունեցավ Առաջին Հանրապետությունը, բայց դրվեցին մեր վերանորոգված պետականության հիմքերը: Այսօր մենք հիշում ենք մեր ազգի համար մեծ զոհողություններով եւ միաժամանակ մեծ հույսերով լեցուն այդ ժամանակաշրջանը: Հիշում ենք ամբողջանվեր ջանքերը մեր ժողովրդի, որ առ Աստված հավատով ու հույսով բազմաթիվ մարտահրավերներ դիմագրավելով՝ կառուցում է ազատ ու ստեղծագործ կյանքը մեր Հայրենիքի: Հանրապետության տոնի խորհուրդը հրավեր ու քաջալերանք է մեզ՝ ամենայն նախանձախնդրությամբ հոգալու հայրենի մեր երկրի բարգավաճումի եւ համայն մեր ժողովրդի բարօրության համար՝ հանուն մեր նախնյաց, մեր ներկայի ու մեր գալիքի:

Աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ խաղաղություն շնորհի համայն աշխարհին եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդին զորացնի հավատքով, հայրենասիրությամբ ու եկեղեցասիրությամբ՝ աննվազ ջանքով ու նվիրումով, ազնիվ ու արդար գործերով ծառայելու ազգային մեր բոլոր իղձերի մարմնավորմանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջույն ենք հղում եւ Հայրապետական Մեր օրհնությունը բերում մեր ժողովրդին ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս համայն՝ Հաղթանակի եւ խաղաղության օրվա առիթով:

Մենք փոնում ենք հաղթանակը ֆաշիզմի եւ բռնության դեմ, փոնում ենք հաղթանակը Շուշիի ազատագրության: Մայիսի 9-ի խորհուրդը մեզ համար աշխարհում մարդկանց ու ազգերի խաղաղ եւ ազատ ապրելու աստվածաշնորհ իրավունքի պաշտպանությունն ու հաստատումն է:

Այս հավատով մեր ժողովրդի զավակները՝ զորավար ու զինվոր, սխրանքի ու փառքի ճանապարհ անցան Երկրորդ աշխարհամարտի մարտադաշտերում եւ Շուշիի ազատագրման պայքարում՝ դրսեւորելով ռազմավարական տաղանդ ու արիություն:

Գոհություն ենք մատուցում Բարձրյալին, որ արժանացրեց մեր ժողովրդին՝ տոնելու Հայրենիքի պաշտպանության եւ հայրենի Արցախ աշխարհի ազատագրության հաղթանակները եւ ապրելու ուրախությունը բազմաթիվ ձեռքբերումների, որոնցով զորանում է այսօր մեր կյանքը Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում, որոնցով զորանում են նաեւ մեր հույսերը՝ մարմնավորելու մեր բոլոր նպատակները:

Աղոթում ենք Երկրորդ աշխարհամարտում եւ Արցախյան ազատամարտում զոհված ռազմիկների եւ բոլոր զոհերի հոգիների համար, ովքեր իրենց կյանքով կերտեցին Մայիսի 9-ի հաղթանակները:

Աղոթք ենք բարձրացնում առ Բարձրյալ աշխարհի խաղաղության եւ ժողովուրդների բարօրության համար: Թող Տերը խաղաղ ու ապահով պահպանի մեր Հայրենիքը եւ մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի եւ օրհնի մեր ջանքերը՝ հանուն մեր բոլոր արդար հույսերի:

Շնորհք եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն: